Չափագիտական միջազգային կազմակերպություններին Հայաստանի անդամակցության վերաբերյալ քննարկում



Երևան, 2023 թվականի օգոստոսի 15

«Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրով ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ) կազմակերպել է աշխատաժողով՝ նվիրված Հայաստանի անդամակցությանը միջազգային չափագիտության կազմակերպություններին, մասնավորապես՝ BIPM-ին (Չափերի և կշիռների միջազգային բյուրո) և OIML-ին (Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպություն): Աշխատաժողովին մասնակցեցին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության, ՀՀ փոխվարչապետի գրասենյակի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի, Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի, ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին BIPM-ին և OIML-ին անդամակցելու դեպքում միջնաժամկետ և երկարաժամկետ ծախսերը, ինչպես նաև որակական և քանակական ակնկալվող արդյունքները:

Բացման խոսքով հանդես եկան ՀՀ էկոնոմիկայի նախարարության որակի ենթակառուցվածքի զարգացման վարչության պետ Ժաննա Զաքարյանը և Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսսը՝ ընդգծելով չափագիտության միջազգային հանրությանը Հայաստանի ինտեգրման կարևորությունը:

Չափագիտական կանոնակարգերի մշակում Հայաստանում



Երևան, 2023 թվականի օգոստոսի 22

ՄԱԱԶԿ-ը քննարկում կազմակերպեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՍՉԱՄ-ի և Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում ներկայացվեցին Հայաստանում չափագիտական կանոնակարգերի վերաբերյալ բացահայտումներն ու առաջարկությունները:

ԵՄ-ի և Հայաստանի չափագիտության կարգավորման համակարգերի վերլուծության միջոցով՝ Հայաստանի կառավարությանն առաջարկվեց մշակել երեք առաջնահերթ կանոնակարգ՝ չափածրարված ապրանքների, ոչ ավտոմատ կշռող սարքերի և չափիչ գործիքների մասով: Հիմք ընդունելով այս առաջնահերթությունը՝ ՄԱԱԶԿ-ը հետագայում աջակցություն կտրամադրի ՀՀ կառավարությանը չափագիտական կանոնակարգերի մշակման և կիրառման գործում:

Չափածրարված ապրանքների կանոնակարգման վերաբերյալ միջազգային դասընթաց

Բադ Ռայխենհալ, Գերմանիա, 2023 թվականի հուլիսի 3-ից - 7-ը

ՄԱԱԶԿ-ը, համագործակցելով OIML-ի հետ, աջակցեց ՍՉԱՄ-ի աշխատակցին Գերմանիայում անցկացվող չափածրարված ապրանքների վերաբերյալ դասընթացին մասնակցելու գործում:

Դասընթացի նպատակն էր հաշվի առնելով միջազգային պահանջները, տեսական և գործնական պարապմունքների միջոցով ծանոթացնել մասնակիցներին չափածրարվող ապրանքների պիտակավորման և քանակական հսկողության գործընթացին:

Վերապատրաստման շնորհիվ ՍՉԱՄ-ի աշխատակիցը ծանոթացավ չափածրարվող ապրանքների կարգավորման պահանջներին և հիմնական դրույթներին, որոնք ներկայումս բացակայում են Հայաստանի իրավական չափագիտության համակարգում:

«Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագիրը, որը ֆինանսավորվում է ԵՄ-ի և իրականացվում է ՄԱԱԶԿ-ի կողմից, նպատակ ունի աջակցել Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնին (ՍՉԱՄ)՝ շահառուներին կայուն և միջազգայնորեն ճանաչված չափագիտության ծառայություններ տրամադրելու համար:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու համար կարող եք դիմել՝
Ծրագրի ղեկավար՝ Յոնգ Վուին, էլ. հասցե՝ C.WU@unido.org
Հայաստանում ծրագրի համակարգող՝ Մանե Թափալցյանին,
էլ. հասցե՝ M.TAPALTSYAN@unido.org